

# ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՍ



(Շարունակութիւն եւ վերջ)

Ցարու:

“Հինգշաբթի, Սեպտեմբերի 30ին (1893) Արքունական թատրոնում Հայոց մշտական խումբը ներկայացրեց Գոյ Քերէւ, Առմայրատի դրաման... “Բոյր Թերեզյայ”ի գերը ինչպէս և “Գամեկիազարդ տիկնոջ” գերը Տիւն Հրաչեայի գլխաւոր գերն է: Գրա մէջ նա այնքան ծափահարութիւններ էր վատարում սրանից տասր տարի առաջ, ամբողջ թատրոնը մինչև ինքնամոռացութիւնն ոգևորում էր: Այդ երեկոյ էլ տիկնոջ խաղը նոյն յաջողութիւնն ունեցաւ: Հատարութիւնը որ արդէն սկսել է այցելել ներկայացումների, անպադար գուրս էր կանչում տիկնոջ. և այդ ի գուր չէր: Մենք տեսել ենք տիկնոջ այդ գերում առաջ և Տիւն: Ցասը տարի բաժ չըզուրս գան ոչ թէ փեսայ է շնորհալի գերասանուհուն. այլ կարծես մի յարմար առիթ է առել աւելի խորատուգիլու կատարած գերերի հոգու մէջ: Նրա խաղը մինչև վերջին մանրամասնութիւնը մտածուած է, թեալական է, գրուիչ և կեղեցիկ: Նա կարողացաւ ցոյց տալ ճնշուած մայրապետի ամբողջ իւրեանքն ու իրենց կրթութեան խտուրթիւնների դէմ, զգուսնը դէպ ի գաստարակութեան պատճառն սխտմէր... Տիկնու Հրաչեայ բոլորովին զմայլեցրեց հասարակութեանը, ծափահարութիւնները վերջ չունեին:”

Արշալույս. Թիւ 118, 1893, Հոկտ. 10:

“Հինգշաբթի հոկտ. 7ին, Հայ գերասանական խումբը ներկայացրեց Արքունական թատրոնում Տիւն արու յայտնի Գամեկիազարդ Տիկն դրաման, մասնակցութեամբ տիկնու Հրաչեայի, որ կատարում էր Մարգարիտի գերը: Այդ օրը, հանդիսականների թիւը անհամաստ աւելի էր քան նախընթաց ներկայացումներին, երեկ այն պատճառաւ որ տիկնու Հրաչեան արդէն հոչապուած էր այդ գերում տակաւին տասներկու տարի առաջ:

Արդարև, տիկնու Հրաչեան այդ օրը այնքան մտածած, ուսումնասիրած և խնամքով պատրաստած էր իւր գերը, որ իւրաքանչիւր քայլափոխին հիացումն, սարսուռ և լաց էր պատճառում հանդիսականներին: Երբորդ արարուածում հրաշալի էր և սիրտ կեղեքող այն տեսարանը, երբ Մարգարիտը իւր բուն զգացմունքով լի սէրը թափելով Արամնի վրայ՝ բաժանուց նրանից: Այստեղ ծափահարութիւնը հասաւ իւր գագաթնակէտին: Հինգերորդ արարուածում Արամնի հետ հանդիպումը ցնցումն պատճառեց ամբողջ հասարակութեան. իսկ ինչ վերաբերում է նրա մահուան տեսարանին, այդ ամեն նկարագրութիւնից բարձր է:”

Շարունակութիւն

Մշակ, Հոկտեմբեր 1893:

“Մենք մտադիր չենք մանրամասն հաշիւ տալ ընթերցողներին այն ներկայացումների մասին որոնք տրուել են այն ժամանակ երբ Մշակ չէր հրատարակում: Մենք կուզէինք միայն մի քանի ընդհանուր նկատողութիւններ անել այն ներկայացումների առիթով: Շատերը ի նկատի առնելով այն հանգամանքը որ հրատարակութիւնը շատ սառն վերաբերուեց մինչև այժմ տրուած ներկայացումներին, տրամադիր են կարծելու որ այս տարի էլ Հայոց թատրոնն անսխալանքի վիճակ է ունենալու: Գործը այդքան յուսահատական չէ թւում մեզ: Ունենալով խմբի մէջ Տիկնու Հրաչեայի նման առաջնակարգ տաղանդ, որի խաղը տանելը բազդ կը համարի իւր համար Թիֆլիսի հասարակութիւնից շատ աւելի խտապահանջ հասարակութիւն, ունենալով Տէր Կալթեանի պէս աչքի ընկնող կամիկ և այնպիսի օգտակար ոյժեր ինչպէս ՊՊ. Արեւեան, Պետրոսեան և Օր. Ախաչեան, Հայ թատրոնի գեկավարները կարող էին պործը այնպէս տանիլ որ թատրոնը միշտ լի լինէր:

“... Ով որ համեմատել է մեր և ուսաց թատրոնը, անշուք նկատած կը լինի որ նրանց մէջ կայ մի հիմնական տարբերութիւն. որ կապ չունի գերասանների ընդունակութիւնների հետ: Այդ տարբերութիւնն է որ ուսաց գերասանները, շատ քիչ բացառութեամբ, բարձր էլ անցած են լինում մի որոշ չկողմ, իսկ Հայ գերասանների մեծամասնութեանը բեմական կրթութիւն, ինչպէս Բոլորուպի ստամ է,

“Աստուած է տուել”, մի կողմ թողնելով Տկն. Հրաշեային, որի բնածին տաղանդը բացառիկ դրուժեան մէջ է:”

Տաղաւ. Հոկտեմբեր 1893):

“Հինգշաբթի, Արքունական թատրոնում խաղացուեց “Կամելլադար տիկին”: Մարգարտի գերբ կտտարում էր տիկին Հրաշեան: Ընման է տաղանդաւոր գերասանուհին այդ գերի մէջ: Մենք բոլորովին չափազանցած չենք լինիր եթէ պնդենք թէ Թիֆլիսն այդպիսի Գովիէ չէ տեսել: Ո՞ր մէկ տեղն ասենք: Ամեն տեղ, ամեն տեսարանում, տիկինը Տրուալի էր: Իսկ վերջին գործողութեան մէջ, մահուան տեսարանում, նա գերազանցեց ինքն իրան: Քանի՞ քանի՞ անգամ նկատեցինք արտասուքներ Տանդիսականների աչքերում: Ոգևորութիւնն ընդհանուր էր, Եսփահարութիւններն անվերջ, յափշտակութիւնը լրակատար: Երբ վարագոյրն իջնում էր, մի լուսէ մեռելային լուսութիւն էր տիրում հիացմունքից, և ապա դաժնիկ սկսում էր զլրդալ: Եւ ո՞վ չի զարմանալ, թէ տաղանդի ի՞նչ ոյժ պիտի ունենայ, որ տասը տարի բեմ գուրս չգալով, յանկարծ հանդէս գայ աւելի շնորհքով և աւելի մշակուած:”

Նոր-Կար ( “Բեաթրիս ” խաղի ներկայացման տութիւ ) թիւ 191, 30 Հոկտ. 1893):

“Արժէր Բեաթրիսի դերում տեսնել Տիկին Հրաշեայի ընտիր խաղը: Այդ գերբ տիկնոջ ընկերատուարի մէջ անշուշտ առաջնակարգ գերբերից մէկը կարող է կապուել: Գովուար է մասնանշտ անել թէ որ արարուածի և որ տեսարանի մէջ տիկինն աւելի աչքի էր ընկնում: Սկզբից մինչև վերջը Տ. Հրաշեան Բեաթրիսի դերը կատարեց առանց նկատելի անհարթութիւնների: Նրա ձայնը նոյն երեկոյ փոքր ինչ քերչացել էլ էր: Կարևոր ենք համարում յօրինակ այլոց մասնանշտ անել Տ. Հրաշեայի մի առաւելութեան վրայ, այդ այն է որ տիկինը պիտէ ոչ թէ միայն խօսել, այլ և լսել: Իսկապէս ուշագրութեամբ լսել խօսակցին, դա քիչ նշանակութիւն չունի: Գրեթէ նրանից է կախուած միայն խօսակցի ասածների համեմատ՝ հարկաւոր արտայայտութիւնների տալ ղեմքին, հարկաւոր շարժումներն անել, և վերջը պատասխանը հարկաւոր տոնով տալ: Գրանով էլ

տեսնում ես որ գերասանն ինքը մտածում է և գիտէ ի՞նչ է ասում, և ոչ թէ ազգոմտի պէս գերբ անգիր կրկնում: Գերասանը լուռ ժամանակ էլ պիտի խաղայ, և Տ. Հրաշեան լուռ ժամանակ էլ խաղում է: Այդ խաղը տեսնում ես նրա դէմքին, շարժումների մէջ և հասկանում ես թէ այդ ժամանակ նա ի՞նչ է գգում:”

Աւելի շանձարացնելու համար ձեզ, այսօր քանը բաւական կը համարիմ: .

ԺԵ.

Այս միջոցին, կոկորդի տկարութիւնն շուտափոյժ կը յառաջանար: Ամեն ներկայացման, երրորդ արարուածի կէսին, կ’ուռէր կոկորդս և սաստիկ կը նեղեր գիւ: Շարունակ կը յուզէին գիւ: Այդ յուզմունքները մյուս կուտային սկարութեան յառաջանալուն:

Նրևակայեցէք՝ քովիժէի անգամ է եղեր այն մարդը որ “Բազպիսանայ” մէջ կտոր շափած առնել կը շնայ երկու մատ պակաս չափեր Ի՞նչ հասկացողութիւնն պիտի ունենայ պարտնը նոր զարդի կամ հինի մասին:

Բերեր են “Մեղէա” խաղը. — Տիկինն, սորվեցէք այս գերբը, որ ներկայացնէք:

— Ոչ, պարտներ, կ’ըսեմ, ես “Մեղէա” չեմ ներկայացներ: “Գարբնոցպետ” էն յետոյ՝ “Մեղէա”, այդ ի՞նչ փատած փիէս է. “Արևելեան թատրոն” իր րեփերթուարէն է: Ես չեմ կարող ներկայացնել:

— Ի՞նչ կ’ըսեք, տիկին, ուուսաց բեմին վրայ այսինչը կը ներկայացնէ այդ խաղը:

— Ան կարող է ներկայացնել: Ես չեմ կարող: Անքապէս, պարտներ, ձեզ գաղտիւր տալու համար պէտք է օրինակ մը առաջ բերեմ: Ան որ կ’ընգէ եւրոպական երգեր, պէտք չէ երգէ “պայտի”ներ. ձայնը կը փձանայ: Երկու տերանց կարելի չէ ծառայել:

Այդ միջոցին քովիժէի անգամներէն մին տեղէն բարձրանալով բաւ .

— Տիկին, գրամիկ կը ստանաք, ինչ որ ձեզի կուտան՝ ըրէք, դուք ինչո՞ւ կը խառնուէք: Չեմ գիտեր թէ ինչպէս ես ինձ թողլ տուի յանկարծ երեք անգամ խիել պարտնի խոշոր

փորին, այնպէս որ խեղճը երեք քայլ ետ գնաց:  
— Այսպիսի մէկ քանի փոր բուսական չէ  
Հրաշեան վարձեալու: Ա՛չ. իմ արուեստս գրամով  
չեմ ծախեր:

Քայց արդէն ուժերս սպառած էին: Չիս  
տուն տարին: Տղու պէս կուլայի:

— Ա՛խ, այդ մարդիկը ամենևին հասկացո-  
ղութիւն չունին բեմի մասին: Լրագրութիւնն  
ալ չի բողբոքեր. չ'ըսեր թէ այդ տեսակ խաղե-  
րու ժամանակն անցած է: Աւրիշ ազգեր առաջ  
կ'երթան, բայց մենք միշտ ետ ու ետ:

Եկան քովթէի անգամները ներուութիւն  
իմդրեցին, ըսելով.

— Տիկին, գուք շղոտ էք շատ: Կ'երեւայ  
թէ այդ շնորհը պէտք էր որ գուք այդքան  
տաղանթուր արթնիսթ ըլլայիք: Ներողութիւն  
կը խնդրենք:

Այո՛, անոնք կրկին զիս չէին հասկնար, և  
Վերջէս չեմ չնեղայացնելուս պատճառը զգե-  
րուս կը վերագրէին:

Այսպէս ասպիսի քովթէի հետ կը գործէի:  
Պայման էի դրեր որ ինքնուրոյն խաղեր  
ներկայացնելու ատենին՝ հեղինակը ներկայ չը  
գտնուի փորձերուն, իսկ եթէ ներկայ ըլլայ՝  
ինձ դերացուցութիւն չընէ: Լրագրութիւն կայ:  
Ինքը կը ցանկայ որ ես դեղին ներկեմ գելը,  
և ես ներկայացուցի կապոյտ. լրագրութեան  
միջոցով կարող է բողբոքել թէ գոյնը այդ չէր.  
և կը վերջանայ:

Ընդունած էին այս պայմանս:

Ինքնուրոյն խաղ մը պիտի ներկայացնէիք,  
որուն հեղինակը բողբոքի սիրելի անձնաւորու-  
թիւն մըն էր. քովթէն չէր յարգեր իմ պայ-  
մանս. հեղինակը ինձ երեք անգամ կրկնել  
սուսու գերը:

Յարգելով պարոնը, ոչինչ ըսի, բայց իմ  
գէմքին մկանունքները, շրթունքներս սկսան պար  
գալ՝ զղերու գրգռուձէս:

Այդ միջոցին եկաւ հաստափոր պարոնը ինձ  
ձեւք առ յարեւելու համար: Խփեցի ձեռքին:  
Պարոնը շուսրած ետ ետ գնաց մինչև քուլիս-  
ները:

Երկու ժամ յետոյ, մտեցաւ ինձ քովթէի  
մէկ ուրիշ անգամը.

— Տիկին, գուք խփելով մեր ընկերով՝  
իսիս չէք նաև մեզ: Չէ՛ որ ան մեր ընկերն է:

— Շատ ուրախ եմ, պարոն. չէի կարծեր  
թէ մէկ ապաստով պիտի կորոզուամ երեքիդ  
խփել: Ուստի ստացէք ձեր բաժինը: Պայմանը  
ստորագրած ատենս՝ առաջին հարցումս եղած է  
թէ՛ «րեժիսոր, ունի՞ք: Պ. Արթուր համեաց պա-  
տասխաններ է՝ «Այո՛: Եկեր եմ Թիֆլիս, և  
տեսիւր եմ Պ. Թարխանեանը այդ պաշտօնին  
մէջ: Պարոնը կարող է շատ լաւ մտք ըլլալ,  
բայց «րեժիսոր» ո՛չ: Ես չեմ կարող դերէս  
դուրս գալով դերացուցութիւն ընել: Եւ  
վերջապէս դերացուցութեան պաշտօնը առաջին  
դերակատարներու պաշտօնէն շատ ծանր է:

Չէի կարող երկու բնա ուսերուս վրայ տա-  
նիլ: Քայց կ'ընէի երբեմն՝ ամբողջութիւնը պահ-  
պանելու համար: Շատ անկանոն էին փորձերը:  
Ամէն մէկ դերասան պէտք էր կանչել ու յիշե-  
ցնել թէ՛ «կարգը ձերն է, եկէք փորձեցէք»:

Ի վերջապէս, ռեժիսորի ննջողոյն պատճա-  
ռու՝ հրաժարական տուի: Քովթէին պարտա-  
կան էի երեք հարիւր թուլլի: Քայց խիզձս  
հանգիստ էր. քանի որ անոնցմէ խաբուած  
եկած էի Թիֆլիս, կարծելով թէ կազմակերպ-  
ւած խումբ կար:

Ես կազմակերպուած չեմ համարիւր այն  
խումբերը որ չունին իրենց մէջ գլխաւոր պա-  
տասխանատու անձը — դերացոյցը: Ամէն դի-  
մացդ ելլողը ռեժիսոր չէ:

Այդ միջոցին եկաւ Պ. Ստեփան Թուժանե-  
անց ու խնդրեց ազնկանս ձեռքը: Կշտուեցան:

Ընտանեքս թողուցի Թիֆլիս, Ընտնց ապ-  
րուստին համար դրամ ձգելէս յետոյ՝ հազիւ  
ձամբու ծախքի դրամ ունէի: Արթուր համեաց  
ու ես գագինք Պաթում: Մեր ետեկն պիտի  
գային Պիննէմէձեան գոմարիները, որոնց ճա-  
նապարհածախան ալ պիտի հայթայթէիք ներ-  
կայացմանց հասցիթէն: Շատ տնայտոյ ժամանակ  
էր: Այդ ամսուան մէջ բարեգործական նպա-  
տակով 2-3 ներկայացում տրուեր էր: Պ. Խա-  
րազեան կը պնդէր որ շատ չեմ ներկայացում,  
քանի որ ոչ որ պիտի գար:

— Քայց, Պ. Խարազեան, ես դրամի պէտք  
ունիմ:

— Ինչքան որ հարկաւոր է՝ առէք, ես  
պատրաստ եմ:

ՀնորՏակալութիւն յայտնելով մերժեցի, որովհետեւ յոյս չունէի ուրիշ տեղէ ստանալով պարտքս վճարելու:

“Գամելիագարդ տիկին լի ազգարարութիւններն արդէն ցրուեցինք:

Պարոն մը, որ կը բնակէր մեր իջևանած Տիրանոյցը, խնդրեց տոմսակներու տետրակը, համազօրելով զիս թէ արդէն բոլորը ծախուած կարելի է համարել:

Գիշերները՝ քնացած աստեն՝ սովորութիւն ունէի այդպիսի տեղեր ճրագք վառ պահելու: Զեմ գիտեր ինչպէս է եղեր՝ վառ մտքը ինտուով վարագործը բռնկէր: Աջքս բացի, տեսայ որ վարագործը կ'այրի: Քաշեցի, կիսով մնացելուս վրայ ինկաւ: Մագերս բռնկեցան, վերմակով մարեցի, սկսայ զանգահարել: Զանգը չէր բաներ: Այն գիշերն անցեր էր չորս ժամ: Ռուսերէն չէի գիտեր: Սկսայ հայերէն “Տըրե՛Տ կայ, Տըրե՛Տ կայ, կանչել: Ոչ դը հասաւ: Իսկ Տըրե՛Տ կը շարունակէր մեծնայ: Երբք համանց կը բնակէր այգտեղ, բայց չգիտէի որ սենեակը: Սկսայ գոչել՝ “Երբք համանց”, լսեց ձայնս, եկաւ. “Պաժար կապատա”, սխաւ կանչել: Ամէն կողմէ հաւաքուեցան սենեակս, Տըրե՛Տը մարեցին, բայց իմ ձեռքս ստակալի կերպով այլաձէ էր և անմիջապէս ուռած: Մէկ ձեռքս փակթմած՝ երկրորդ գիշերը պիտի կատարէի Մարիլիթի դերը: Տոմսակ չկար թատրոնը, քանի որ պարտքը բոլորը առեր և ինձ ապահովեր էր թէ ամէնը ծախուած է. ժողովուրդը կուգար և ետ կը դառնար՝ կարծելով թէ տոմսակ չկայ: Հասաւ վարագործին բարձրանալու ժամը: Ժողովուրդ չկար թատրոնը: Ինձ բարի-Այստեղ ուշ կուգաս: Աերկատա, վարագործը բարձրացնելու ժամը տալը ըզպէ անցեր էր, և դեռ ոչ որ կը տեսնուէր թատրոնին մէջ: Խընդրեցի որ գտնեն այդ պարտքը: Իր սենեակին մէջ քնացած գտան, քանի մը զաւակ լաւի կոնծելով՝ քունը տարեր էր: Իսկ տոմսակներէն ոչ մէկ հատ չէր ծախներ: Այդ ըողէն յետոյ՝ թատրոնին մէջ ծախուեցաւ երեք հարիւր ըզպէ լի տոմսակ:

Խաղը լաւ անցաւ: Ժողովուրդը գոՏ ձնաց: Երկրորդ ներկայացման՝ պիտի տայինք “Դարնեցապետը”: Այդ գիշերն ունեցանք մօտ 1500 ըզպէ մուտք: Ժողովուրդը խառն էր,

հայ, եւրոպացի, թուրք: Կրկին ժողովուրդը գոՏ ձնաց: Թուրքերը առաջարկեցին ինձ ուրիշ գիշեր մը թուրք լեզուով տալ վճարիլ մը, որուն փոխարէն կը խոստանային տալ ինձ 60 ոսկի: Մերժեցի:

Այդ գիշեր, Պաթումի երիտասարդութիւնը ընթրիք էր սարքեր, մասնաւորապէս ինձ համար, Տիրանոյցին մէջ: Հարցուցի թէ՛

— Կուք տիկիններ չունի՞ք, կամ քոյրեր:  
— Մենք այստեղ առանց ընտանիքի կ'ապրինք, պատասխանեցին:

— Զաւելով պիտի մերժեմ ձեր առաջարկութիւնը: Պարոններ, դերասանուհին կ'ընչունի այդ առաջարկութիւնը, բայց մայրն և ամուսինը կը բողբէ: Դժուարութիւնը այգտեղ է: Պէտք է այդ երեքը հաշտ ապրին իրարու հետ: Եթէ ձեր քոյրերէն կամ մայրերէն մասնակցող ըլլաւ այդ սեղանին, ուրախութեամբ կ'ընդունէի: Այն ատեն ոչ մայրը ոչ ալ կինը արտնջաւու իրաւունք կ'ունենար:

Պարոնները գանգատք էին ինձ դէմ Բայց Պ. և տիկին Խարագետնը եղան այնքան բարի որ երկրորդ գիշերը ամբողջ այդ երիտասարդութիւնը հրախրելով իրենց տունը՝ ընթրիք տուին և հաշտեցուցին մեզ իրարու հետ:

Նոյնպէս ՀնորՏակալութեան արժանի են սիրողները որոք թէ՛ մասնակցեցան իմ ներկայացումներուս և թէ՛ նուիրեցին ինձ զարնեայ պտակ: Ժողովրդէն ալ ստացայ զամբիւզ մը լի դաշտային գեղեցիկ ծաղկաներով:

Պ. Խարագետնի տունէն կառք նստելով գացինք կայարան, ուր յայտնելով բոլորին ՀնորՏակալութիւն, ձամբայ ելայ դէպ ի թիֆլիս:

Կը պատրաստուէի իւր հրաժեշտի ներկայացում տալ “Մարիէն Լըքուվիթօր”: Այդ միջոցին, Պ. Ստեփան Թուամանեանց՝ գալով Բագուէն, ինչպէս որ հայրնիքի պատրաստութիւն տեսնեմ: Փետրուար 9ին ընտանեօք ձամբայ ելանք դէպ ի Բագու, և փետրուար 14ին կատարեցինք պատկազրութեան հանդէսը:

Ժողովրդի ընտրեալ գասակարգէն պատգամաւորութիւն մը, զոր կը կազմէին տիկին Լիզա Կրասնիկեան, տիկին Սոֆի Ագամեան, տիկին Աննա Լալայեան, Պ. Պաղիբով, Պ. Մութաֆեան և այլք, եկան ինձ մօտ խնդրելու որ անպատճառ ներկայացուի մը տամ Բագու:

— Բայց ես չունիմ ոչ մէկ պատրաստութիւն: Զգեստներս ալ թփփլիս են, դերակատարներն ալ կը պակսին: Չեմ կարող:

Մասնատրուպէս կը ցանկային «Գամելիագարդ տիկին»: Բայց Արմանի դեր կատարող ալ կը պակսէր: Այն ասան առաջարկեցին Արթուր Տամանեանը Արմանի գերին Տամար: Այդ անկարելի էր: Բնութիւնը զրկած էր խնդը Արթուր Տամանեանը Արման ըլլալու բարեբաղուածներէն: Ետեւորու Տասութիւնը, ևն. սրգեկէ էր:

Պնդեցին .

— Մեզ Արման Հարկաւոր չէ: Որպէս գիշտուցարդ, կարողանաք ներկայացնել, մենք կը խընդրենք պարտնէն որ յանձն առնէ կատարել Արմանի դերը:

Այդ միջոցին Տ. Գիւս ևս խոստացաւ անմիջապէս երթալ թփփլիս և Հարի եղած զգեստները ուղարկել: Պ. Վարձամ Մուծաֆեան այնքան բարի եղաւ որ գտնելով սիրողներ, աղակցելով ամէն կերպ, յաջողուց ներկայացումը:

Այս առթիւ Պոլսոյ Վեթոմոսթիկ մէջ Հրատարակուած յօդուածի վր թարգմանութիւնը կը յիշատակեմ՝ զազպար տալու Տամար այդ ներկայացման մասին:

Այդ թերթի 1894 փետրուար 26ի թիւին մէջ կար խմբագրական տեսութիւն մը Բագուտի թատրոններու վերաբերմամբ. ի միջի այլոց, խմբագրութիւնը խօսելով իմ վրաս, ըսած էր հետեւեալը.

«Փետրուար 21ին, Թաղէկէի թատրոնին մէջ տրուեցաւ Հայերէն լեզով «Մարկրիթ Վոթիէ», այն Տրաշալի գործը զոր ստեղծեք է Տիւմա որդի կարող գրիչը: Տիկին Հրաշեայ կը խաղար Մարկրիթի դերը. թատրոնը կատարելապէս լի էր. սեղ չկար, շնայելով արասկարգ կերպով աւելցուած ամոռներուն... Տիկին Հրաշեայ այն աստիճան հանձնարարուեստ կերպով տարաւ իր դերը, այնպիսի բարձր գեղարուեստական ընդունակութեամբ, որ հանգիստակցի բողբոջին մոռցած էին թէ արգեօք թատրոնի մէջ են թէ իրապէս Մարկրիթ Վոթիէի սալոնը: Այդպիսի խաղացուածք դեռ մենք երբէք չենք տեսնիր ուսական բնի վրայ: Ահա ինչու չէ կարելի չցատիլ որ տիկին Հրաշեան ընդ միշտ կը թողուր բեմը՝ կոկորդի տկարութեան պատճառով:

«Մեր ներկայ թիւին մէջ Հրատարակելով մեր քննադատին տիկին Հրաշեայի ներկայացման նուիրած նկարագրութիւնը, մենք կ'աւելցնենք միտիայն որ այն շքեղ ազամանդեայ ապարանջանը, այն սուկելի քնարը, այն ծաղիկեայ կողովը, և այն կրկնապատկուած գնբրով տեղերը, և այն «օմսիտն» ներով տուն ճանապարհէլը — դեռ շատ քիչ են փոխարինելու այն էսթիմիքական գոհունակութիւնը զոր պատճառեց մեզ տիկինը խաղացուածքը:»

Ահա՛ քննադատին յօդուածը .

Տիկին Հրաշեայի Գեղեյացուումը

(Մարտի 15 Կոնսթ)

«Մենք կը գտնուինք այն զմայելի ազգեցութեան և այն բարձր գեղարուեստական զգացմանց տակ, զոր կրեցինք այն իրիկունը՝ այժմ Բագու Հիւրասիրուած Թփփլիսի Հայկական խմբի արթիսթ տիկին Հրաշեայի ներկայացումէն: Ժանջցած ըլլալով տիկինը իր մատաղ տարիքին մէջ, այսինքն տասներկու տարի առաջ, երբ թփփլիսի Հայկական խմբին մէջ բռնելով առաջին տեղը՝ կը խաղար լուրջ տրամածիքական դերեր, և համեմատելով զինքը՝ Երմոլովայի, Ֆեդոտովայի և Մալիխայի հետ, շատ կէտերու մէջ մենք կը կարծէինք և կը սպասէինք որ այժմ ալ կարողանայ հասնիլ անոնց բարձրութեանը: Բայց մեր կարծիքները յօդս ցնդեցան՝ բառիս բուն նշանակութեամբը, տեսնելով այնպիսի զօրեղագոյն և ուժեղ տաղանդ մը, որ կը գտնուի տիկին Հրաշեայի մէջ: Այնպիսի Մարկրիթ Վոթիէ մը ինչպէս տիկին Հրաշեան ներկայացուց փետրուար 21ին Թաղէկէի թատրոնին մէջ, մենք երբէք չէինք տեսած և հազիւ այսուհետեւ ալ կարենանք տեսնել: Նլիւզիտնք մինչև այն աստիճան լիակատար էր, կեանքը այնքան կենդանի կերպով կը ներկայացուէր բեմի վրայ, որ հասարակութեանը, ինքզինքը կորսնցնելով, բոպէններով մեռելային լուութիւն կը պահէր: Չնայ յիշով մէկ քանի՞ Հարիւր մարդոց ներկայութեանը, շնչառութեան ձայն անգամ չէր լսուեր, և այսպիսի յաղթական լուութեան կը հետեւէին այնպիսի բուռն ու ոգևորուած «պապօ»ներ, որոնց նմանին մինչև ցարդ չէր արժանացած ոչ մէկ արթիսթ մեր բեմին վրայ: Արթիսթի ամէն մէկ քայլը, ամէն մէկ շարժումը, կը շնչէր

կեանք , Ճշմարիտ և իրական բնականութիւն , և կ'արտայայտեր գեղարուեստական nec plus ultra: Ընաջին տեսարանն իսկ , մեր առջեւը կանգնած էր կիսաշխարհի այդ առիւծը , գեղեցիկ և շնորհալի Մարկրիթի՛ն , փայլուն և շքեալ որպէս թիթեռնիկ , բայց ակնյայտի նշաններով իր սարդի ընդունակութեանն , որ իր ոտայնը կը ձգէ մեծ արիստոկրատներուն վրայ՝ ինչպէս ճանձնբուս : Ընդհանրապէս ոչ մէկը կը սիրէ , և մինչև իսկ կ'ատէ գանձնք : Միենունյն աստն , իր սիրան և ուղեղը կը մնան մաքուր այդ շրջանին մէջ՝ ինչպէս ագամանդը ցեխին մէջ : Այո՛ . այս անք սեանաք , սեանաք մեր սեպհական աչքերով թաղիէվի թատրոնին մէջ փեսարուար Չիխ : Մեզի կը թուի որ մենք կեանք տեսանք , ոչ թէ ներկայացում : Գանկարծ այս արքիւս Քնմը , Հակաարդարան շրջապատը , կըքքաւացութեան հանդիսարան՝ սիրակեղծութեան այս վայրը կը լուսափայլի սրբազան բառով՝ «Աէր» . Մարկրիթ կը ժպտի այս խօսքի վրայ , և ի՛նչպիսի ջանքախիչ , թերահաւատ ու դառն ժպիտ . բայց իրեն կը հաւատացնեն , կը հաւատան թէ ճշմարիտ է առիւտ , թէ Արման Տիւփալը կը սիրէ պինքը , թէ ան կը հետաքրքրուէր իրմով երբ դեռ հիւանդ էր . Մարկրիթ շփոթած էջ , ան ինքզինքը հիմա կ'երևակայէ ինչպէս սիրելի ու հրաշալի երևոյս մը , որուն կը խօսին գեղեցիկ խաղալիքի մը մասին զոր վաղուց փշրեր ու կոխտերթէ . նախ չի հաւատար , յետոյ կը հաւատայ , զարձակ կը կասկածի . նորէն կը հաւատայ : Չարհարանք , տանձանք , արտասուխառն ծիծաղ , և այս բոլորը տիկին Հրաշնայի դէմքին վրայ : Մեր գրեւը կը յօգնի այս բոլորը գրելով և մենք կը գարմանանք թէ ի՛նչպէս այդ հօր տաղանդը չի յօգնիր մի առ մի արտայայտել այդ բոլորը . — ո՛չ , քիչ է ըսել « մի առ մի արտայայտել » , այլ զգալ , թափանցել հոգւով ու գլխով : Բայց ահա ընկճուեցաւ առիւծը . բոլոր գրացմանց ամենեղ ուժեղը յողժեց իրեն , և ան անմիջապէս անձնատուր եղաւ այդ սիրոյն , պիշատիչ առիւծը փոխարկուեցաւ մաքուր աղանջի աղանիկ մը . և կը շոյէ կը փաղաքէ իր իր սէրը : Մի՛ գպչէք անոր սիրոյն , մի՛ խէք անկէ այդ սէրը . ատով դուք անոր կեանքը կ'առնէք : Այսպէս կը խօսէր տիկին՝ Հրաշնայի խաղաղածքը՝ այն յողթական թպկներուն մէջ

երբ ան կը հաւատար այդ սիրոյն՝ ինչպէս իր անձին :

« Բայց ահա անսպասելի հիւր մը , իր սիրելի Արմանին հայրը : Ո՛հ , ի՛նչ ուրախ է անոր գալուն , առ կը նշանակէ որ ան ալ ուրախ է իր որդւոյն երջանկութեամբը , և կը մտածէ կապէս սպազան իր եղբւո՛ւ զառնիչքան , իրա՛ւ , ի՛նչ փառաւոր գործ : « Ո՛հ , որքան դուք բարի էք » : Բայց ան կը խօսի իր աղջկան վրայ , Արմանի քրոջը : Մարկրիթ իր սէրը պէտք է գոհէ Արմանի անմեղ քրոջը երջանկութեամբը համար : Ահա՛՛ Սկիլլան , ահա՛՛ Քարիբդան , ուր աշխուճուած Մարկրիթը աչքըլը տրորելով կ'արտասանէ՝ « Լամաձայն եմ » , Այո՛ , գրել և նկարագրել Հրաշնան , այդ տեսարանին մէջ՝ անկարող ենք : Թուել մի առ մի այն բոլորը ինչ որ կը ստեղծագործէր այդ տաղանդը , մեր գրելը անկարող է : Մենք այդ թուպին տեսանք արցունքներ , այո՛ , տաք և արտաուուչ արցունքներ : Մենք տեսանք թէ առաջին կարգերուն՝ ի՛նչպէս կը հեկեկար մանկամարդ օրիորդը և ի՛նչքան անցոր էին շրջապատողներուն հանդարտեցցուցիչ ջանքերը : Բնմէն նկատեց առիւտ տիկին Հրաշնան , և իր արցունքներն ալ սկսան յորդիլ : Բայց ի՛նչ գրեմ , քանի որ ինքը բնութիւնը կը խօսի . քննադատի գրիչն աւելորդ է » :

ԺԶ :

Այդ ներկայացման հետեւալ օրն իսկ պիտի մեկնէինք Քիֆլիս : Մերիկ Պերճիկէս բաժնուելու ցաւը հաւատար էր Մարկրիթի ցաւին : Շոգեկեղաք ճամբայ ելաւ թէ չէ , ես ընկալ երեսի վրայ , բարձրաձայն հեկեկալով .

— Ո՛չ , առիւտ իմ ուժերէս վեր է , չեմ կարող , Անտո՛ն , առանց գայն տեսնելու ապրիլ : Ան իմ ընկերս էր : Ես էի անոր լաւագոյն բարեկամը :

Միրոս , սիրտս կը ցաւէր : Անքան այդ ցաւը զիս ընկճած էր , որ չկարողացայ ո՛չ Պրաւթաֆեանին ո՛չ ալ սիրողներուն յայտնել իմ շնորհակալութիւնս : Անբաղաքա՛մար կերպով հեռացայ Բագուէն :

Քիֆլիս հասանք : Ամէն ինչ պատրաստ էր : Մէկ քանի օրէն պիտի կարողանայինք ներկայացնել « Արիկէն Լըբուվրէտ » , Ես ընկճուած էի :

Այդ բաժանումը զիս հիւանդացուցիք էր :

— Անտան , երթանք Պոլիս , ըսի ամուսնոյս չեմ կարող ներկայացնել «Ատրիէն Լըբուվրօր» :

— Քանի որ այդպէս կ'ուզես , երթանք : ըսաւ , և սկսաւ մեր իրեղէնները հաւաքել :

Այդ միջոցին եկաւ Յ. Գիւստ ք. Աղանեանը , իմ սիրելի հովիւս :

— Ո՛չ , ըսաւ , չեմ թողներ : Ի՛նչ կ'ընէք , սիրկին . ոչ մէկ սոմանկ չէ մնացած գրեթէ , և դեռ ազգարարութիւն չէ եղած : Մեծ բազմութիւն պիտի ըլլայ և նուէրներ պիտի ստանաք :

— Ո՛չ , տէր հայր , տկար եմ , չեմ կարող այժմ գիշեր իսկ ձամբայ պիտի ելլամ :

Գացնիք Պոլիս : Չկար այլ ևս տան մէջ Պերճիկը : Գիշերներն անբուն մինչև առտու կը լուացնէի : Զիս կը մտիթարէր Մկրեան սէր հայրը :

— Հայր իմ , մի՛ ըսէք . ես միտքս չէի զրեր որ ան օտար ապրանք է , և չեմ ալ կարող հաշտուիլ այդ գաղափարին հետ : Կարելի է այդ բանը դիւրին է անոնց համար որ արդէն այդ մտքով նախապատրաստուած կը մեծցնեն իրենց աշխիւր :

Ճ շեռուեալ ամառը՝ Քիւսլօտաք երթալով , գրեկեցի համբուրցի Պերճիկս և հանգստացայ : Բայց կրկին բաժնուելու ժամը մօտեցեր էր : Նոյն տանգանքերով բաժնուեցայ : Այդ անտանելի դրութիւնս տեկց մինչև այն օրը ուր մեր կամէն անկախ պատճառներով գաղթեցինք Պոլսէն՝ ինչպէս շատերը կը գաղթէին այդ միջոցին : 1896ի կոտորածն էր տեղի ունեցեր :

Մեր ընտանիքին գրեթէ մէկ անգամը կը կազմէր երիտասարդ մը զոր փոքր հասակէն սիրած էինք այր ու կին : Ան կուլար ըսելով .

— Հապա զիս ո՛ւր կը թողուք : Զիս որդի կը կռէիք , և երբ գաղթելու ժամանակը հասաւ , դուք միայն ձեր գաւկըններուն մտածելով զիս կը թողուք :

Թարմարցուցինք մէկ կերպ , և հետերնիս առնելով ուղարկեցինք Բագու՝ սիրելի որդւոյս Ս. Թումանեանցի մօտ , գրասենեակը ծառայելու : Այդ երիտասարդի անունն էր Գրիգոր Մարբըլ :

Եկանք Թիֆլիս ընտանեաց և աւելցուցինք գաղթականներու թիւը : Երբ փորրիկ սննեակներ վարձելով ամենահարկաւոր կարապիքը ձարեցինք : Կ'ապրէինք տխուր արտում : Երկու

ամսէն՝ ամուսինս վերադառնալով Պոլիս , կրկին հաստատուեցաւ իր պաշտօնին մէջ : Իմ տկարութիւնս սաստկացաւ : Կը հազայի գիշեր ցորեկ : Այնպիսի դրութեան հասայ որ ալ չէի կարող անկողնէս վար իջնել : Ինչքան շնորհակալութեան պարտք ունիմ՝ յարպելի բժ. Ալամախանին , որ եօթն ամիս ամէն օր անձուրբարար ինձանց զիս : Հապա սիրկին Մեկիքեանին և Պ. Արշակ Թարութիւնեանին ո՛րքան շնորհակալ եմ որ առտու իրիկուն մօտս էին . շատ իրիկուն կ'երթային իրենց դերերը ներկայացնել և յետոյ գալով մօտ՝ մինչև լոյս կը մնային և անձուրբարար զիս կը խնամէին : Եղաւ օր մը ուր նիւթական վիճակ ալ գէշցաւ : Ամուսինս Պոլսէն գրամ ուղարկեր էր , բայց ես դեռ չէի ստացեր : Պարսնի մը , որ նախկին քովիթէի անգամներէն էր , ինդրոցի մեր սուրը գալ : Տալով իրեն Բագու ստացած ապարանջանն , որուն արժէքը 600 ռուպլիէն աւելի էր , իրնդրոցի փոխ տալ ինձ 100 ռուպլի մինչև 15 օր , և եթէ ինքը չունի՝ տոկոսով աւելե տեղէ մը . ես տոկոսը ուրախութեամբ կը վճարէի : Պարսը իր տունէն նամակ մը գրկեց ինձ , ըսելով որ եթէ փեսաս երաշխաւոր ցոյց տայի 100 ռուպլի համար՝ ուրախութեամբ կուտար դրամը : Այդ նամակը զիս սաստիկ վշտացուց : Ես վարժ չէի ո՛չ անհատի ո՛չ ալ ժողովրդին դիմել նեղութեան ըրակներուս : Գիտամք էի հաստատուած Թիֆլիս , որպէս զի եթէ նեղութեամբ ապրեմ՝ Թումանեանները զիս շահանեն : Չէի ցանկար որ ո և է մէկը ինձ օգնէր :

Սաստիկ կուլայի , անկողնոյս մէջ նստած : Այդ ըրակէն եկաւ Պ. Մարգարեան :

— Այ՛ , սիրկին , ինչո՞ւ կուլաք :

Տուի նամակը . կարգաց , հասկցաւ ամէն ինչ :

— Այսօր արդէն ժամանակն անցած է . վաղն ալ կիրակի է . տեսնե՞ք տեղէ մը կրնամ ձարել , ըսելով առաւ ապարանջանն ու գնաց : Ամիցայէս յետոյ՝ եկաւ իմ սիրելի Արշակ Թարութիւնեանը : Ան ալ զարմացաւ՝ զի յուզւած տեսնելով : Անոր ալ բացատրեցի կրած վերաւորանքս :

— Ինձ չվստահացան 100 մանէթ :

Թարութիւնեանը , հանելով գրպանէս հիք գրուպի :

— Տիկին օհն , ըսաւ , հոգուդ մտնիմ ,

մենք հիմա ասով կ'առնենք ամենհարկաւոր եղածները . ես վաղը դրամ կը ճարեմ :

Բ Երրորդ օրը Սարգսրեան բերաւ 100 բուպլին . ես ալ չորս օր յետոյ Պոլսէն դրուած գրասն ստանալով վճարեցիքն եւ ես ստացանք պատարնոյսնը : Բայց ես այդ տխուր տրամադրութեան տակ Գրիգոր Մարըրջին նամակ մը գրեի էի, որուն մէջ կար շատ թախիծ : Կեանքը կը քննադատէի : Կըսէի թէ չ'արժեք իբր անպէտք արարած մը ապրիլ անկողնի մէջ, այսպիսի պայմաններով : Եթէ երկու փոքրիկներս չըլլային, արդէն վերջ տուած կ'ըլլայի կեանքս :

Սիրելի Ստեփանը՝ անհանգիստ ըլլալով իմ մասին՝ ուզեի էր կարգաւ նամակը : Տեղեկանալով վիճակիս, անմիջապէս Գրիգորն ուղարկեի Եր Թիֆլիս, հետը տալով նամակ մը Պերճիկէն . «Շուտ պիտի գաս այստեղ, եթէ մեզ ալ կ'ընդունին իբր զուգակ : Լայրիկին ալ գրեցի, ան ալ հրատարական տալով գործէն՝ պիտի գայ հոս հաստատուելու :»

Մարտ ամսուն՝ ճամբայ ելլելով Թիֆլիսէն, եկանք հաստատուեցանք Բագու :

Երկու ամիս յետոյ՝ գացիքը Մաշտոզա՝ ամառանոց : Այդտեղ էր որ եկաւ տիկին Եղիսաբեկը Սարգսրեան ինձ խորհուրդներ հարցնելու Բագուէլ, յաւաքիկայ թատրոնական սեզոնի եւ անոր յարգութեան մասին : Ես տկար էի : Գէթ այդ միջոցին չէի կարծեր թէ կարող եմ անմիջական օգնութիւն մը հասցնել այդ ներկայացումներուն :

— Եթէ արժէք մը կարող եմ ունենալ իմ խորհուրդներս, պատրաստ եմ : Պէտք է անմիջապէս թէփերթուար կազմէք, յետոյ հրահրէք մէկ լաւ դերացոյց, թող ըլլայ ռուս, իտալացի կամ գաղղիացի, միւսողնն է, արուեստը լեզու չունի : Ինքնուրոյն խաղերու համար թեժօր Տարկուոր չէ, իսկ երուպական, ռուսական խաղերը անոց ծանօթ են : Փնէք չունիք ռուսաճարաններ գերասաններու համար : Սեր ուսումնարանը, գործնական դպրոցը՝ պիտի ըլլայ թատրոնը : Եթէ զուք պիտի տաք ներկայացումներ այնպէս ինչպէս կուտան գերասանները այս կամ այն կողմ, չ'արժեք ատոր համար հովանաւորութիւն, չ'արժեք դրամ ծախակ : Երբ թէփերթուարը պատրաստ կ'ըլլայ, նոյնպէս եւ թեժօրը, այն ատեն է որ ըստ թէփեր-

թուարի կը կազմուի խումբը : Բեփերթուարէն պիտի հասկնանք թէ ո՞վ պէտք է հրահրենք : Ամէն պարագայի մէջ, տիկին, այս տարի կը ներկայացնէք ամիսը 4 կամ 5 անգամ . իսկ գայ տարի կ'ունենաք կանոնաւոր թէփերթուար : Այն ատեն կարելի է ուլմն անգամ ներկայացնել, 4 խաղ՝ նոր, մնացեալը՝ թէփերթուարէն : Եթէ կարողանաք այս ամառ երկու ամսուան համար վճարելով դերասաններուն կէս կէս ամսական, փորձեր ընել տալ, այն ատեն կարելի է մինչև վեց անգամ ներկայացնել :

Շնորհակալութիւն յայտնելով հեռացաւ տիկին Սարգսեան : Լեռնոցեան եկան Մաշտոզա եւ ինձ հետ այն նպատակաւ տեսակցեցան Պ. Տ. Յովհաննիսեան եւ ուրիշներ : Անոնց ալ կրկնեցի նոյն խօսքերը :

Ամառը վերջացաւ, եկանք Բագու : Գերասաններն ամբողջապէս հաւաքեի էին Բագու, բայց ո՛չ թէփերթուար կար եւ ո՛չ ալ դերացոյց : Փորձեր չէին եղեր, պիտի սկսէին ներկայացումները կարճեմ հօգու . Կէն : Ուրիշս՝ Թուսնանց Ստեփանն ալ հովանաւորող անգամներէն էր : Իրմէ խնդրեի էին, ամ ալ եկաւ ինձմէ խնդրելու .

— Մայրիկ, կը խնդրեմ, ստանձնէ՛ դերացումները պաշտօնը, մինչև որ գայ դերացոյցը . մէկ քանի ներկայացումէ յետոյ՝ այստեղ կ'ըլլայ :

Նուրունցի որդւոյս առաջարկութիւնը : Հովանաւորող անգամներէն ոմանք հրահրեցին մեզ գրադարանի գահէինքը : Ուրեցի գերասաններուն ցուցակը տեսնելու Տեսալ որ ըստին ալ հերոս են՝ քիչ բացաւութեամբ : Հարցուցի վերահսկող պարտնին թէ արեւօք ներկայացուելիք խաղերուն անձնաւորութիւններն ալ ամբողջապէս հերոսներէ՞ բաղկացած են :

Հետեւեալ օրը պիտի սկսէինք փորձել «Հոգուով աղբասներ», Կին ծանօթ չէր ինչպէս, լընդրեցի անգամներէն որ այդ իրիկունը ինձ յանձնեն պաշն՝ որպէս զի ռուսաճարաններն ինձ առարկեցին թէ այդ իրիկունը պէտք ունէին փեխելու գերեր օրինակելու համար :

— Ստեփան, որդեակ՛ի, կարելի չէ այդպէս, ես ինք չեմ գիտեր ի՞նչ է խաղը, ի՞նչպէս կարողանամ երթալ եւ գեր ցոյց տալ :

— Մայրիկ, կերպ մը գտիր, խնդրեմ, գնա՛ վաղը անպատճառ :

Գացի թատրոն . չբարձրացայ բեմին վրայ . սրահին մէջ , առաջին կարգի աթոռի մը վրայ նստայ Գերասաններէն շատերը Հետս կը զուարճանային .

— Այստեղը ի՞նչպէս պէտք է ըսել , տիկին : — Պարոններ , ես ծանօթ չեմ փեռսին .

ինչպէս որ ներկայացուցեր էք . այնպէս ալ ըրէք :

Բայց սաստիկ կը նեղուէի . և շատ գէշ գրութեան մէջ կը զգայի զիս :

Յանկարծ , գերասան Արաքսանը .

— Կերեցէ՛ք , տիկին , ըսելով , ծաղրական եղանակաւ ցոյց տուա Պ . Աւետեանը որ կը կատարէր Սևատուչի դերը , և բաւս ոնոր . — “Պուք այս միջոցին սաստիկ հարբած էք .”

Այդ գիշեր յայտարարեցի ՊՊ . անդամներուն , որ եթէ խիղջն ինձ չտան փեռսը , ինչ որ ալ ըլլայ՝ ա՛յ ներկայ չպիտի գտնուիմ փորձերուն : Ստացայ խաղը և լաւ մը ուսումնասիրեցի : Հետևեալ օրը գացի փորձին : Այլ ևս բեմի վրայ էի , յուշարարին քովը : Առաջ սկսայ փոքրերուն դիտողութիւն ընել . հետզհետէ կարգը հասաւ մեծերուն . Սևատուչն եկաւ բեմ , հարբած գրութեան մէջ :

— Ո՛չ , Պ . Աւետեան , դուք հարբած չէք :

— Ի՛նչպէս , տիկին , ըսաւ Պ . Արաքսանը . քիչ առաջ ես ըսի բեմի վրայ թէ ան սենեակը նստած կը հարբի :

— Քիչ յետոյ ինքն ալ պիտի ըսէ՝ “Երկու երեք շիշ շամբանեա խմեցի հարբելու համար , բայց կարեն քարի վրայ եմ լեցուցեր , ոչ մէկ ազդեցութիւն չըրաւ .”

Առաջնակարգները նախ դժգոհութիւն ցոյց տուին . բայց յետոյ սիրեցին զիս . ես ալ կը սիրէի զանոնք :

Օր մը դերի մը համար խօսք կ’ըլլար թէ “Այս իմ՝ ամփոլուս” չէ .”

— Պարոններ , հաւատացէ՛ք , ես երբեք յանձնառու չեմ ըլլար որ ամենփոքրիկ գերասանն իսկ խայտառակուի : Ես պիտի աշխատիմ որ ամենքդ ալ ստանաք պսակներ : Ես ձեր պսակներէն թափած ծաղիկները հաւաքելով պիտի կազմեմ պսակ , ան ալ բեմին ետեւը :

“Հոգուով աղքատներուն ներկայացումը լաւ անցաւ : Երկրորդ ներկայացումն էր “Տօն Արիկորիս” , Պ . Թրեանցի փեռսին : Երրորդը պիտի

ըլլար “Գամկնիազարդ տիկին” . Պ . Արէլեան չէր ուզեր կատարել Արմանի դերը : Տիկին Սարգսեան , ներկայացնելով Պ . ՕՏանեանը , ինձ բաւ .

— Ահաւասիկ ձեզ Արման մը :

— Պարոնը արդէն կատարած է այդ դերը :

— Ո՛չ , տիկին :

— Հապա ի՛նչպէս պիտի կարողանայ 3-ն փորձով կատարել այդպիսի պատասխանատու դեր :

— Եթէ կ’ուզէք , կը պատասխանէ Պ .

ՕՏանեան , այս գիշեր տուէք ինձ դերը , վաղն առտու արդէն պատրաստ է :

— Տիկին Սարգսեան , այդ պարոնը գերասան չէ :

— Ի՛նչ կ’ըսէք , տիկին , ինչո՞ւ կը վերաւորէք պարոնը . ան մեր բեմին զարդն է :

— Կարող է սաղօններու գարբ ըլլալ , բայց ո՛չ բեմի . տիկին , անկարելին խոստացողէն ոչինչ կարելի է սպասել :

— Տուէք այս գիշեր դերը , և կը տեսնէք :

— Ո՛չ , տիկին , պէտք է այժմ սամ իրեն “Տօն Արիկորիս” մէջ երկրորդական սիրահարի դերը . եթէ յաջող կատարէ , այն ատեն կարելի է նաև մեծ դերերու մէջ փորձել պարոնը :

“Տօն Արիկորիս”-ի ներկայացումը յաջող անցաւ . բայց ես գոհ չեմացի Պ . ՕՏանեանէն :

Ու՛թը գիշեր մեր տունը կը կատարէինք փորձեր տիկին Սիրանյշի Հետ՝ Կարկրիթի դերին համար . Արէլեանի ձայնը մարած էր , ինք ալ տկար . այդ պատճառով էր որ չէր ուզեր խաղալ : Հատ խնդրեցի . ընդունեցաւ Արմանի դերը և յաջողութեամբ ներկայացուց :

Կերեցացման իրիկունը , ժողովուրդը շատ գոհ էր ամրողութենէն : Խաղին վերջը , սկսան ծափահարել և “Հրաշեայ” աղաղակել : Ես չէի ուզեր երևալ : Գերասաններէն և գերասանուհիներէն եղան ըսողներ . “Ի՛նչ պէտք կայ Հիմա” : Բայց բարի Արէլեանը վարագոյրը բարձրացնելու նշանը տուաւ և գրեթէ զիս զրկելով բեմ հանեց՝ ժողովուրդեան առջև ձեռքերս համբուրելով :

Այդ “սեզօն”ի նոր դերասանն էր Պ . Ալիխանեան : Այդ 3-4 ներկայացմանց ընթացքին , Պ . Ալիխանեան վազելով կը յառաջանար : Իընդրեցի անդամներէն աւելցնել անոր ամսականը : 2եմ յիշեր՝ 10 կամ 15 րուպլի աւելցուցին :

Հասան ֆելեկեան քորյորը : Ներկայացուցինք «Ջարան» խաղը : Արկին հասարակութիւնը գոհ ծնաց, նոյնպէս և լրագրութիւնը : Չեմ գիտեր քանի՛ ներկայացում էինք տուեր, յանկարծ հայց բարձրացուցին թէ երկու օրուան մէջ պիտի ներկայացնէին «Պատիւ» :

— Ի՞նչ կ'ընէք, տիկին Սարգսեան, աս անկարելի է :

— Բայց, տիկին, դերասանները պատրաստ են, անոնք կ'ըսեն՝ «Մենք կարող ենք», իսկ դուք կը հակառակիք :

— Ես անձնուրարար կը կատարեմ դերացոյցի պաշտօնը, և մինչև անգամ զրպանան կը ծախսեմ : Բայց եթէ դուք նոյն իսկ խոշոր ամսական մը վճարէք, ես զարձեղ այսպիսի պայմաններու մէջ կը հրաժարեի դերացուցութենէ : Անոնք անպատուելով «Պատիւ»-ը, պիտի անպատուեն և զիս : Իս կ'արգիլեն՝ դնել ազգարարութեան վրայ՝ «ղեկավարութեամբ տիկին Հրաչեայի» :

— Թող ապուի այդպէս, ձեզ ի՞նչ փաստեմէ կ'ուզէք, ներկայ մի՛ գտնուիք փորձներու :

— Ա՛չ, ես կը բողոքեմ : Ես երբէք չէի տար Պ. ՕՏանեանին Բոպերթի դերը :

Վերջապէս ներկայացուցին «Պատիւ» : Այդ իրիկուն բազմութիւն թիչ կար : Ես նստած էի օժեանկա և կը կարմրեի տաննելով բեմին վրայ կատարուող խոստատակութիւն : Միջնարարին՝ ցացի տիկին Սարգսեանի օժեանկա :

— Բայց ի՞նչպէս գիտցաք որ պիտի չյաջողին :

— Աս իմ արուեստս է, տիկին. եթէ վաճառականութիւն ըլլար, ոչինչ կարող էի հասկնալ :

Այն գիշերէն ի վեր ուր ես ծափահարուեցայ, ոմանց հաճելի չէր եղած ատիկա, և աշխատեցան զիս հեռացնել թատրոնէն :

Ժամանակ մը յետոյ՝ եկան ինձմէ խնդրել որ ընդունեմ ըստիարակութեան պաշտօնը, բայց ամակամով : Պայման զրի չորս կամ ան առաւելն հինգ խաղ ներկայացնել այդ տարի, 500 ռուպլի ամսական և մէկ նպաստ : Այդ գումարը սարսփելի երեցաւ իրենց, թէ և այդ «տեղոս»-ին իրենց ըրած ծախքերուն գումարովը Տնտես ձեռք մը խումբ մը ևս կարող էր պահել կանոնաւոր կերպով : Վճարեցին 150 ռուպլի, և բերելով

երկրորդ բեմարարք մը, նստեցուցին բեմասօրի տեղը : Արդէն պէտք չէին գաք հիմնաւոր գործ մը բանելու : Արտաքինը զարդարուն էր. այդ բաւական էր իրենց համար : Գերասաններն մէկ քանին նոյն իսկ խնդրած էին անգամներէն որ հարելին հինգ գեղջն իրենց ոտնիկէն, բայց տան իրենց ուսուցիչ մը :

Այդ միջոցին, կարծեմ «Նոր-Գար»ի մէջ, քննադատական յօդուած մը երեցաւ «Քոյր Թերեզայ»ի առթիւ՝ Պառեան ստորագրութեամբ : Սուր ակնարկութիւններ կային Քոյր Թերեզայի դերը ներկայացնողին հասցէին : Չարամտներ հովանաւորող անգամներուն հաստացուցեր էին թէ այդ յօդուածին զրդիչն է տիկին Հրաչեան : Անգամները ժողով էին ունեցեր և որդւոյս Ստեփանին ալ հակառակուցեր էին թէ ատոր հեղինակը ես եմ : Այդ պիշիւր, ժողովն յետոյ, ան պիտի գար մեզ հետ ընթրիւու : Իբր դունչն ներս մտաւ, տեսայ որ դէմքը սխուր է :

— Ստեփան, ի՞նչ կայ :

— Մայրի՛կ, ի՞նչ պէտք ունի թշնամական յօդուածներ գրել սուրբ այսինչին կամ այնինչին հասցէին : Եկար, շնորհակալ եմ, մէկ քանի խաղ կատարեցիր, վերջացուց, ինչո՞ւ կը վարուիս թշնամաբար :

— Ստեփան, որդեակ՛, աւելորդ մի՛ խօսիր, կ'երեւում որ չեմ ձանձար Պաշեանը, հեռուէն ալ չեմ տեսած այդ մարդը : Ես այդպէս ցածոգի վարմունք չեմ կարող ունենալ. եթէ ես ըրած ըլլայի, «Այո, պիտի ըսէի՛ ես գրել տուի սա հիման վրայ» : Չեմ ձանձար այդ պարուն, բայց գաղափարակից եմ, և պարունը դեռ թիչ է գրեր :

Տիկին Մելիքեան այդ խումբին մէջ էր : Իր նպատակը պիտի տրուէր, և այդ նպատակն շատ թիչ բան պիտի հասնէր իրեն : Բարոյական պարտք համարեցի դրամ ժողովել անոր նպատին առթիւ : Մեծ մասամբ հաւաքեցի Թումանեաններէն : Գումարը հասաւ կարծեմ 900 կամ 1000 ռուպլիի : Ինչե՛ր չըրին, Ատուած իմ, այդ առթիւ, — թէ ես չարամտութեամբ կ'ընէի, թէ դիտմամբ կ'ընէի որպէս զի ուրիշներուն փնասեմ : Չեմ գիտեր դեռ ինչերո՞ւ չվերաբերեցին այդ ըրածս. իսկ ես մշտ կը կրկնէի՝ «Ես պարտական եմ այդ կնոջ, և կը ցանկամ փոքրիկ ծառայութիւն մը մատուցանել անոր» :

ԺԷ.

Բագուայ թատրոնի երկրորդ տարեշրջանն սկսելու վրայ էր , վերահսկող անդամներէն մէկ քանին հրատարակ էին , մէկ քանի նորերը ընտրուելու : Այդ կարծեկէք թէ անցեալ «սէզօն»ը իրենց համար դաս մը եղած էր , թէ այլ ևս ամառուրնէ ամէն բան պատրաստած են և ամէն բան կանոնաւոր է : Հասաւ ժամանակը , և մեր յոյսերը օդը ցնդեցան : Երկին նոյն սխալները յամառութեամբ կատարեցին , ահագին գումարներ շարտելով աջ ու ձախ : Այս երկու «սէզօն»ներուն մէջ՝ հովանաւորող անդամները պիտ պատուեր էին երկրորդ կարգի օժեանկ մը դնելով տրամադրութեան տակ : Իսկ երրորդ «սէզօն»ին՝ թատրոն երթալու համար պէտք էր վճարէի : Գրտեցէք , խնդրեմ :

Անգամ մը գերաստուհիներ եկեր էին մօտ . որքան որ կրցեր եմ՝ աշխատեր եմ այդ իրիկուան գերեը ցոյց տալ իրենց : Ինչորեր են որ այդ իրիկուներ թատրոն գանուիմ , որպէս զի կարողանամ քննադատել :

Իրիկուան , գացի թատրոն , վճարեցի տոմսակի գինը , և նստած էի օժեանկին մէջ . յանկարծ եկաւ օժեանկներու ծառան :

— Տիկին , այս տոմսակը «պզօման»ի տոմսակ է :

— Այդ իմ գործս չէ , թող վաճառողը շտար :

Գնաց ծառան , տեսնուեցաւ վերահսկող անդամներէն մէկուն հետ , քիչ յետոյ վերադարձաւ .

— Տիկին , տեսեմ ձեր տոմսակը :

Յոյց տուի , և հեռացաւ .

Ամբթ , և հագաք ամօթ : Պոխ եղած ժամանակ , ֆրանսական , իտալական , յունական և թրքական թատրոններ միշտ եղած եմ , և ոչ մէկ կողէկ չեն ընդունած ինձմէ :

Որդիս Հայկը գիշեր մը թատրոն էր գացեր : Պ. Աւետեան տոմսակ է հարցուցեր քովի՞նքի կողմէն , և տեսնելով որ չունի ,

— Պ. Հայկ , դուրս ելէք թատրոնէն :

— Գուց դուրս ելէք թատրոնէն , կը պատասխանէ Հայկը : Գուց ո՛վ էք : Ես տեսարանի

վրայ եմ ծներ : Զիտ այս տեղէն հեռացնելու ոչ որ իրաւունք ունի :

— Պարապ խօսք մի՛ ընէք , եթէ ձեր մայրիկն ալ գայ , պիտի վճարէ : Այսպէս ենք վճռած :

Ես իմ որդիէս աւելի հպարտ էի : Առանց վճարելու թատրոն չէի երթար :

Այժմ տեսնեք թէ այդ երեք տարուան շրջանը ի՞նչ սուտա մեզ , ի՞նչ յառաջադիմութիւն ունեցեալք . ի՞նչ նոր ուժեր հասուցինք :

Ոչի՛նչ . կրկին ոչի՛նչ , բայց ի Պ. Արեւելեանի կատարած քանի մը լազ գերերէն :

Եկաւ Պ. Յովհաննիսեան : Պիտի ներկայացանէր «Քին» : Ի՛նչ ոգեւորութիւն : Ի՛նչ «գիւտ» : Ի՛նչ տաղանգ , հանձար : Ոսկի շիֆր»ով ուսումնաւարտ :

Տկար , անկողնէս ելլելով գացի «Արեւ-թատրոնը» , ուր պիտի տրուէր ներկայացումը , և որ լեցուն էր ժողովրդով : Բացուեցաւ վարագոյրը , տեսայ առաջին արարուածը : Տիկին մը եկաւ մօտս , հարցուց թէ ինչպէս կը գտնեմ , «Լաւ է» , ըսի : Այդ տիկինը շատ թատերասեր էր : Երրորդ արարուածին՝ կրկին եկաւ ու հարցուց .

— Ի՛նչպէս կը գտնէք :

— Լաւ :

— Բայց դուք ուղիղ չէք խօսիր :

— Տիկին , այս միայն պիտի ըսեմ , թէ մե՛ղք որ կանուխ ենք ծներ . գէթ պղնձէ մետալի մըն ալ մենք կ'արժանանայինք :

Տիկինը բարկութեամբ հեռանալով քովէս , բարձր ձայնով իր ծանօթներուն ըսաւ .

— Պարոններ , գերասանները կը նախանձին :

Այսպիսի խօսքի մը վրայ կարող էի ծեծադիլ :

Երկրորդ ներկայացման , խեղճը գլորեցին գետին ու հողի հաւասար ըրին . ինչո՞ւ այնքան բարձրացնել և ինչո՞ւ այդպէս գլորել :

Անոր անկմանը յանցանքը մերն է : Պ. Յովհաննիսեան ուղիղ ճանապարհի վրայ էր , բայց մենք զոյն ետ քաշեցինք : Անոր ուսուցիչը ամենալաւ ուսուցիչն է եղեր , բնական զարդի մարդը և ատիկա յայտնի էր նոյն իսկ իր աշակերտի խաղացուածքէն : Այո՛ , ան ճիշտ

սորված էր տեսականը, լուս էր ըմբռնած բնական դպրոցը, այդ պատճառաւ ստացեր էր ոսկի «չիֆր»-ը<sup>\*)</sup>, բայց այդ ուսուցիչը այժմ պէտք էր որ անոր Հետ ըլլար գործնական գարոցին մէջ գեթ մէկ «սեզօն», որպէս զի իր աշակերտին իւրացնել տար բնականը: Անիկա «Էֆէ, ներու շէր կարող դիմել, իսկ իր ունեցածը տհաս էր: Եթէ մենք ունենայինք ուսուցիչ մեր բեմի վրայ, թոյլ պիտի շատր անոր «Քին»-ով սկսել, իրեն ուժին համեմատ բեռ ապով պիտի ձգէր որ անկման ենթարկուի: Մէկ «սեզօն», բաւական էր որ ան մեծնար և ըլլար իրապէս «Քին»:

1893ին, տկարութիւն կրկին աստիպացաւ:

Բժիշկ Տէր-Մելքիսեղեկեանց խնամեց զիս ամբողջ ձմեռ: 1900ի ամառը գացի Ժէլիգնօփօսք: Միշտ ինքը կը խնամէր զիս, և ուրիշները կը կանչէր խորհրդակցութեան: Քիչ մը կազդուրելով կը վերագաւնայի: Այսպէս, ամառ ձմեռ, առանց տհաճութեան անձուրաբար խնամեց զիս ազնիւ բժիշկը Հինգ տարի շարունակ: Ա՛րարհայտնեց զիս շէնի ճանչնար իբրև աղքատիկ ազգին աղքատիկ գերասնուհին, իսկ ազնիւ բժիշկը կը ճանչնար: Ի՛նչ գրել, շնորհակալութի՛ւն. ո՛չ. առ շատ քիչ է. ես չեմ կարող բառ մը գտնել որ փոխարինէ:

Չեմ մոռնար նաև բժիշկ Յակոբեան ազնիւ Երիտասարդը, որուն խնամքներէն ալ շատ օգտուած ենք ամբողջ ընտանեօք:

1901ին ևս երթալով Ժէլիգնօփօսք, փորձեր կ'ընէի բժշկուելու:

1902ի ամառը, զիս շատ յուսադրեց ոռւս բժիշկ մը, խոստացաւ բժշկել կոկորդս: Շատ ուրախ էի: Տիկին Սօֆի Ադամեանին՝ այդ գործունեայ և բանիբուն տիկնոջ՝ Հետ միանալով գացի Քիւլափօսք, ուր կը գտնուէին Մոսկուայի առաջնակարգ կար կարողները: Պատուէր տուի չորս փիէտի համար գգեսաններ: Ուրախ դուրսեթ վերադարձանք Ժէլիգնօփօսք:

Այդ դիշեր երբորդ անդամ ըլլալով կոկորդէս արիւն հոսեցաւ: Գացինք բժշկին մօտ:

— Տիկին, բաւական է որքան որ աշխատ

տեր էք. այլ ևս հանգիստ ըրէք: Գեղերն ալ թողէք, մի՛ գրգռէք ձեր կոկորդը, ան ձեզ չի վնասեր:

Եթէ սիրելի տիկին Ադամեանը չըլլար իմ մօտ, չեմ պիտի թէ ինչ կը պատահէր ինձ: 1901—1902ի «սեզօն»ին, դերասանները ընկերութիւն մը կազմելով եկան Բագու և տունի շարք մը ներկայացուցներ:

Նախկին հովանաւորող անդամներէն մին՝ եկաւ ինձ խնդրել որ ներկայացում մը ղեկավարեմ: Մասնակցողները պիտի ըլլային թատերասէրները: Ներկայացումը պիտի արուէր յօգուտ թատերական ֆօնտի: Այս պարտը այն վերահսկողներէն էր որոնց օրով թատերնի մուտքս կը վճարէի:

Ընդունեցայ: Յաջող անցաւ ներկայացումը: Շատ զարմացայ տեսնելով վերջին արարուածին ինձ նուիրուած ծաղիկիտունը: Տիկին Լիզա Արաքիսիկեանն էր մտածեր թէ՛ փունջով և թէ՛ մասնաւոր այցելութեամբ շնորհակալութիւն յայտնելու: Զգածուած սրտով ես ևս յայտնեցի ազնիւ տիկնոջ շնորհակալութիւնս:

1902—1903ի «սեզօն»ը կրկին մէկ քանի հովանաւորողներ պիտի պահէին անկատար խումբ մը. բայց «սեզօն»ը չվերջացած՝ գործը սնանկացաւ:

1903ի գարնան, Նոյն հովանաւորող տիկին Սօֆի Ադամեանը Հետն առնելով եկաւ ինձ մօտ խնդրելու որ անպատճառ մասնակցեմ Պետրոս Ադամեանի մահաւան յանձնարարութիւն տրուելիք ներկայացման:

— Գո՛ւք պիտի պատկէք Ադամեանը, տիկին չորաշեյա, ըսաւ: Չէք կարող մերթել ձեր նախկին ընկերոջ յարգանք մատուցանել:

— Ես կ'ընդունեմ՝ այն ատեն երբ ներկայացման հասցլթը անոր յիշատակին նուիրէք. կամ անոր անշուք գերեզմանը կը զարդարէք և կամ ուէ անկին փոքրիկ յուշարձան մը կը կանգնէք: Ըստ իս, դուք կը շահագործէք անոր անունը: Խեղճ Ադամեան. կենդանութեանը ոչինչ ենք ըրեր. եթէ ապրէր, անկէ ալ պիտի պահանջէինք որ մուտք վճարելով մտնէ թատերոն, մահուանէն յետոյ ալ անոր անունը կը շահագործենք:

Տիկին Ադամեանը սկսաւ պնդել: Ես չէի կարող մերթել. շատ կը յարգէի ու կը սիրէի

\*) Քոմսերիպուարի ասեկեաներուն սացած ամենեք բարձր աստիճանն է, քիփովնէն եւ ոսկի մետալէն անկի բարձր. զայն սացող դեբասանը կրնայ Զարիմ Յերկայանալ, եւ դերասանուհին՝ Զարուհիոյ:

զինքը : Տիկինը Մոսկուա պիտի երթար իր անձնական գործերուն համար : Խոստացայ : Տիկինը մեկնեցաւ յաջորդ օրը : Ինձ ըսեր էին թէ գովասանական ոտանաւոր մը պիտի կարգայի Ազամեանին ուղղեալ , « ափոթէօզ » էն անմիջապէս առաջ , և իսկոյն պիտի պսակէի Ազամեանի պատկերը :

Այդ իրիկունը՝ ազգարարութեան վրայ տեսայ որ գրուած էր՝ երկրորդ թէ երրորդ թիւ՝ Հրաշեայ : Սաստիկ յուզուեցայ : Այնչէս կ'արժէր արտասանելիք գովարանական ոտանաւորս . եթէ « ափոթէօզ » էն անմիջապէս առաջ չըլլար : Այն ատեն , տիկին Սիրանոյշ զիս վստահացոց թէ՛

— Միեւնոյն բանն է . ես առաջ կը կար-



ՏԻԿԻՆ ՀՐԱՉԵԱՅ  
(Կովկաս, 1883)

դամ, քանի որ Դուրեանէն կտոր մը պիտի կարդամ. դուն ալ յետոյ կարդա՛ :

Տիկին Սիրանոյշ ինձմէ առաջ հագուելով զնց տեսարան : Ես ալ կամաց կամաց հագուելով դուրս եկայ այն լուպէին՝ տիկին Սիրանոյշը լսելու : Բայց տիկինը յանկարծ ըսաւ .

— Ո՛չ, ես այս լուպէին բեմ չեմ ելլեր, անյարմար է . « ափոթէօզ » էն անմիջապէս առաջ են գրեր իմ անունս , այն ատեն կ'եկտեմ բեմ :

Ի՞նչ կարող էի ըսել : Թե՛ւ պարաստութիւն չունէի անմիջապէս լքեմ՝ ելլելու . բայց ժողովուրդն ինձ կը սպասէր . ելայ կտորս ըսի :

Տիկին Սիրանոյշ ամենէն ետքը ելաւ : Իսկ « ափոթէօզ » ին՝ ոուս ազախին մը պսակեց Ազամեանը :

Հապա ի՞նչ բանի համար էին ինձ ինդերբու ինդերբ և խաբեր էին , որպէս զի իմ անունս ալ շահագործեն :

Խեղճ տիկին Ազամեան . ան ալ խաբուած էր ինձ նման :

Ի հարկէ , այդ ներկայացման իրիկունն ալ, հովանաւորող պարտնէն չոր շնորհակալութեան մը չարժանացայ :

Տիկին Պոպով , իր հեղինակած « Ճամբատութեան Պահպան » փիեսին համար եկաւ ինդրելու որ ստանձնեմ՝ դերացուցութեան պաշտօնը . ընդունեցայ . ժողովուրդը շատ գոհ մնաց . սիրող-դերակատարներն ու հեղինակուհին ևս գոհ մնալով՝ յայտնեցին ինձ իրենց շնորհակալութիւնը , բեմին վրայ նուէր մը տալով ինձ : Փոխադարձաբար յայտնելով շնորհակալութիւնս , հետացայ Ալուսիէն , ուր տեղի էր ունեցեր այդ ներկայացումը :

ԺԸ.

Ի՞նչ պէտք է մեզի՝ թատրոնական գործը լաւ հիմքի վրայ դնելու , ժողովրդի մէջէն դերասաններ , մինչև անգամ տաղանդներ հանելու համար : Անոնք որ կային քսան տարի առաջ , անոնցմէ շատերը ոչ ևս են : Անոնք որ կան այս միջոցիս , շատ կարելի է որ անոնցմէ շատերը տաք տարի յետոյ անհետանա՞ծ ըլլան :

Պէտք է ձմեռը մտածել , գարնան ձեռք բերել . ամառը ցանել , ձմեռը հնձել . գէթ մէկ երկու տարի , մինչև որ բաւականաչափ պաշար ունենանք , այսինքն թէփերթուար :

Այո՛ , պէտք է անպատճառ դարնան պատրաստ ըլլայ գէթ քսան խաղ , դերերը օրինակուած , մինչև անգամ մէն մի դեր թող երկու օրինակ արտագրուած ըլլայ :

Պէտք է հրաւիրել հմուտ ուսուցիչ , որ կարողանայ հետեւի դերակատարներուն , հարկաւոր եղած ատեն ինքն անձամբ փորձէ փորձի ժամանակ և ցոյց տայ ներկայացուելիք անձաւորութեան գոյնը :

Յետոյ , պէտք է հրաւիրել դերասանները՝ ըստ թէփերթուարի , յունիս , յուլիս , օգոստոս

ամիսները, զձարելով աննց կէս-կէս ամսական, փորձեր ընել տալ անպատճառ: Պատրաստել տար խազ առաջուց, որպէս զի շարաթական երկու լաւ ներկայացում կարելի ըլլայ տալ: Այն ժամանակ միայն կարելի է պահանջել գերակատարներէն որ անգիր գիտնան իրենց գերերը և ուսումնասիրած ըլլան իրենց ներկայացնելիք անձնաւորութեանց բնաւորութիւնները:

Պիտի առարկուի թէ անոնք արդէն բաւական քանակութեամբ գերեր ունին պատրաստ՝ հետզհետեւ սրուած ներկայացումներէն: Ո՛չ, աստիպ բաւական չէ: Անոնք միշտ հասպնդեցող պատրաստեր են իրենց գերերը, առանց ուսուցչի, և աւելի հասպնդեցող ալ եղեր են միշտ կրկնութիւնները:

Ի՞նչ պէտք է ունենայ իր ներքին կանոնագրութիւնը, և պայմանաւորաւ գերասանը պիտի ստորագրած ըլլայ նաև ներքին կանոնագրութիւնը:

Պատուեցում հարկաւոր է լրագրութեան միջոցաւ, թէ ցանկացողներուն համար ազատ է «փորձերը» շարաթը գէթ երկու անգամ ներկայ ըլլալ փորձերուն, այն պայմանաւ որ բեփոխութիւն ստացած ըլլան անուարի տոմսակ: Եւ թէ՛ անոնք կը սիրին արուեստը, կարող են գերեր աւանել բեփոխութիւն, և մասնաւոր փորձեր ընելով՝ օգուտ տալ ապագային թէ՛ հայ բեմին և թէ՛ իրենց անձին:

Առանց այս հիմնական սկզբունքին, ոչ լաւ ներկայացումներ կ'ունենանք և ոչ ալ ապագայ գերասաններ:

Ի՛նչ սեփ կորուստ է երեք ամիսը՝ այսքան տարիներու զոհողութեան փոխարէն, երեք ամիս կէս-կէս ամսական վճարել գերասաններուն գէթ մէկ տարի, միթէ այդքան անիրականալի պահանջ է, և միթէ այդքան մեծ զոհողութիւն կը պահանջէ:

Ո՛չ, ես կը պնդեմ թէ ո՛չ: Ատիկա շնչին զոհողութիւն է, և այդ բանի իրականացումը անցեալի, նոյն իսկ հետու անցեալի սխալը պիտի սրբագրէ:

Մեակեան 22 տարիէ ի վեր խուճի կը պահէ: Բայց ոչ մէկ ուժ չկարողացաւ տալ մեզի: Որովհետեւ ուսուցիչ չունէր, ինքն էր ստանձնէր այդ պաշտօնը: Մնակեան լաւ գերասան է, եթէ

չհարկի: Գիտե՛ ուսումնասիրել իր գերերը: Թուրք լեզուաւ եւրոպական խաղեր է թարգմանել՝ շատ յաջող, Թուրքաց համար թատրոնական լեզու է ստեղծեր: Ատիկա կ'ընդունիմ: Բայց գէթ Թուրքաց համար մէկ գերասան չէ տուեր, որ կարողանայ կատարել իր գերը այնպէս, ինչպէս որ խաղի հեղինակն է ցանկացցոր յետէ Մաղպեանը եղած ըլլաւ, ոչ Ազաճեան, ոչ Լրաշեայ, ոչ Աստղիկ, ոչ Սիրանոյշ, ոչ Գարագաշ և ոչ Թրեանց չպիտի ունենար հայ բեմը: Հետևեցէք, պիտի տեսնէք զուր անձամբ թէ սղբ միևնոյն շրջանի գերասաններն են:

Կարծեմ, եթէ չեմ սխալիր, 1894ին, կը գտնուէի Պոլիս, Սենեքերիմ Արծրունին ինձ դիմած է նամակով մը, որպէս զի ցոյց տամ Պոլսոյ մէջ գտնուող ուժերէն մէկ քանին, որ կարող ըլլային փոխանորդել ինձ և կրտսեր Գարագաշին:

Մտաւորապէս սա իմաստով պատասխան տուի պարոնին.

«Դուք ինչո՞ւ համար չէք մտածեր Հայոց թատրոնի ապագայի մասին: Միթէ կարելի՞ է ո և է Գարագաշի մը կամ Լրաշեայի մը քմահաճոյքին զոհել այդ դպրոցը: Լրաշեան կ'առարկէ թէ հիւանդ է, Գարագաշը չ'ուզեր կովկաս լինել, պատճառ ըսնելով թէ կովկասի օդը իրեն չի գար: Այսպիսի շնչին պատճառներու համար պէտք է փա՛կ մնայ Հայոց թատրոնը: Սիրելի՛ բարեկամ, ձեզի պէտք է ուսուցիչ, որպէս զի կարողանաք ապագայի համար ուժեր պատրաստելով թատրոնական գործը հիմքէն վերականգնել»:

Քսաներկու տարի յետոյ, դարձեալ կը կրկնեմ միևնոյն բանը, քաջ գիտնալով որ ձայնս անխելի պիտի մնայ՝ ինչպէս մնաց մինչև ցարգ:

ՀԻՍՏՅԱԹ

Ա Ն Բ Զ

